

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ**

Համախառն ներքին արդյունք: ԼՂՀ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալը, ընթացիկ շուկայական գներով, 2009թ. կազմել է 102338.7 մլն դրամ՝ 2008թ. համեմատ աճելով 13.1 տոկոսով: ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը կազմել է 103.9 տոկոս:

ՀՆԱ-ի արձանագրված 13.1 տոկոս հավելաճի տեմպի 2.8 տոկոսային կետն ապահովել է ֆինանսներ և վարկը, 2.3-ը՝ արդյունաբերությունը, 1.9-ական տոկոսային կետերը՝ շինարարությունը, տրանսպորտ և կապը:

Արդյունաբերություն: 2009թ հանրապետությունում, փաստացի գներով, թողարկվել է 34092.3 մլն դրամի արդյունաբերական արտադրանք: 2008թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 115.6 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում պետական և ոչ պետական հատվածների տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 22.4 տոկոս և 77.6 տոկոս՝ 2008թ. համապատասխանաբար 21.1 և 78.9 տոկոսի դիմաց:

Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը կազմել է 5170 մարդ և 2008թ. համեմատ աճել է 136 մարդով կամ 2.7 տոկոսով:

Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2009թ., փաստացի գներով, կազմել է 30656.9 մլն դրամ, որը 2008 թ. համեմատությամբ, համադրելի գներով, աճել է 1.1 տոկոսով:

2009թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում 63.8 տոկոսը կազմում է բուսաբուծության, իսկ 36.2 տոկոսը՝ անասնաբուծության համախառն արտադրանքը՝ 2008 թ. համապատասխանաբար 68.0 և 32.0 տոկոսի դիմաց:

Մշակվող հողատեսքերի (վարելահողեր և բազմամյա տնկարկներ) 1 հա-ի հաշվով 2009թ. արտադրվել է 338.4 հազ. դրամի բուսաբուծության համախառն արտադրանք՝ նախորդ տարվա 471.0 հազ. դրամի դիմաց:

2009թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում գերակշռող բաժինը պատկանում է հացահատիկի (26.7 տոկոս), կաթի (18.9 տոկոս) և մսի (11.8 տոկոս) արտադրությանը:

2009թ. հանրապետությունում արտադրվել է 71.1 հազ. տոննա ցորեն, որը 2008 թ. համեմատ ավելացել է 6.3 հազ. տոննայով կամ 9.7 տոկոսով:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախորդ տարվա հունվարի 1-ի համեմատ կազմել է 99.2 տոկոս, այդ թվում կովերինը՝ 94.3 տոկոս, խոզերի գլխաքանակը՝ 211.5 տոկոս, մանր եղջերավոր անասուններինը՝ 114.1 տոկոս, թռչուններինը՝ 99.2 տոկոս:

2009թ. հանրապետությունում իրացվել է սպանդի համար 4993.7 տոննա (կենդանի քաշով) անասունի և թռչնի միս կամ 2008թ. 121.0 տոկոսը, արտադրվել է 32373.1 տոննա կաթ կամ 103.1 տոկոսը, 19571.9 հազ.հատ ձու կամ 112.0 տոկոսը և 86.8 տոննա բուրդ կամ 102.0 տոկոսը:

Հաշվետու ժամանակահատվածում մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը կազմել է 1562.0 կգ, մեկ ածան հավի միջին տարեկան ձվատվությունը՝ 125 հատ և մեկ ոչխարի միջին տարեկան բրդատվությունը՝ 2.41 կգ:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ սարքին վիճակում գտնվող բեռնատար մեքենաների թիվը կազմել է 1047, հացահատիկահավաք կոմբայնները՝ 228, տրակտորները՝ 934, տրակտորային գութանները՝ 624, տրակտորային կցասայլերը՝ 320, տրակտորային շարքացանները՝ 285 միավոր:

Շինարարություն: 2009թ. հանրապետությունում իրականացվել է 34480.8 մլն դրամի շինարարություն, ինչը 2008թ. համեմատությամբ աճել է 33.5 տոկոսով: Իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 32005.8 մլն դրամ կամ ընդհանուր շինարարության 92.8 տոկոսը:

Ըստ շրջանների ԼՂՀ պետական բյուջեի հաշվին իրականացված շինարարությունը կազմել է. Ստեփանակերտ քաղաքում՝ 4688.9 մլն դրամ, որը 2008թ. նկատմամբ կազմել է 114.1 տոկոս, Ասկերանի շրջանում՝ 1508.2 մլն դրամ (2.4 անգամ), Հաղորթում՝ 653.0 մլն դրամ (125.4 տոկոս), Մարտակերտում՝ 1735.5 մլն դրամ (80.8 տոկոս), Մարտունիում՝ 2466.0 մլն դրամ (144.5 տոկոս), Շահումյանում՝ 521.4 մլն դրամ (2.1 անգամ), Շուշիում՝ 313.4 մլն դրամ (66.5 տոկոս) և Քաշաթաղի շրջանում՝ 583.4 մլն դրամ (89.1 տոկոս):

2008թ. նկատմամբ 2009թ. աճել են արտաբյուջետային (98.4 տոկոսով), համայնքների (75.3 տոկոսով), օտարերկրյա ներդրողների (33.5 տոկոսով), կազմակերպությունների (47.1 տոկոսով), բնակչության (63.9 տոկոսով) և այլ (35.1 տոկոսով) միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքները:

Իրականացված շինարարությունը բնակարանային տնտեսությունում կազմել է 7760.9 մլն դրամ, որը 2008թ. նկատմամբ կազմել է 201.7 տոկոս, կոմունալ տնտեսությունում՝ 7130.0 մլն դրամ (160.6 տոկոս), արդյունաբերությունում՝ 3941.0 մլն դրամ (157.1 տոկոս), կրթությունում՝ 3335.0 մլն դրամ (281.6 տոկոս), տրանսպորտ և կապում՝ 2857.1 մլն դրամ (67.4 տոկոս), առողջապահությունում՝ 1445.3 մլն դրամ (155.1 տոկոս), մշակույթում և սպորտում՝ 930.7 մլն դրամ (74.5 տոկոս), առևտրում՝ 819.9 մլն դրամ (73.2 տոկոս), գյուղատնտեսությունում՝ 245.9 մլն դրամ (25.2 տոկոս), տնտեսության այլ ճյուղերում՝ 6015.0 մլն դրամ (112.6 տոկոս):

2009թ. ֆինանսավորման բոլոր միջոցների հաշվին հանրապետությունում շահագործման են հանձնվել 38137.0 քառ.մետր ընդհանուր (օգտակար) մակերեսով 353 առանձնատուն(բնակարան), 356 աշակերտական տեղով 3 դպրոց: Հանրապետությունում վերանորոգվել է 5 դպրոց 324.3 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Տրանսպորտ: 2009թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 490.7 հազ. տոննա, որը 2008թ. նկատմամբ աճել է 27.0 տոկոսով, բեռնաշրջանառությունը կազմել է 25326.7 հազ. տոննա-կմ, նախորդ տարվա համեմատ աճելով 30.3 տոկոսով:

2009թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 17288.5 հազ. մարդ՝ նախորդ տարվա 14531.2 հազ. մարդու դիմաց: Ուղևորաշրջանառությունը 2009թ. կազմել է 127055.5 հազ. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 28.6 տոկոսով:

Կապ: Հանրապետությունում 2009թ. կապի կազմակերպությունների գործունեությունից ստացված եկամուտների ընդհանուր գումարը, փաստացի գներով (առանց ԱԱՀ), կազմել է 6411.0 մլն դրամ, այդ թվում՝ բնակչությունից՝ 4425.0 մլն դրամ, որը 2008թ. համեմատ ավելացել է 12.8 տոկոսով, այդ թվում՝ բնակչությունից՝ 31.9 տոկոսով:

Հիմնական հեռախոսային ապարատների թիվը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 25031 հատ, այդ թվում բնակարանայինը՝ 21467 հատ կամ ընդամենի 85.8 տոկոսը: 2009թ. հունվարի 1-ի նկատմամբ հեռախոսային ապարատների թիվն ավելացել է 1948-ով կամ 8.4 տոկոսով, այդ թվում բնակարանայինը՝ 1888-ով կամ 9.6 տոկոսով:

Բջջային ցանցի ապարատների թիվը կազմել 59455 հատ, այդ թվում մշտական գծինը՝ 41080 հատ՝ 2009թ. հունվարի 1-ի համապատասխանաբար՝ 35045-ի և 35044-ի դիմաց:

Ինտերնետ ցանցի բաժանորդների թիվը կազմել է 5831, այդ թվում բնակարանայինը՝ 5108 բաժանորդ՝ 2009թ. հունվարի 1-ի համապատասխանաբար՝ 3551-ի և 3072-ի դիմաց:

Մանրածախ առևտուր: 2009թ. հանրապետությունում մանրածախ առևտրի շրջանառության ծավալը կազմել է 69215.9 մլն դրամ և 2008թ. համեմատ աճել է 10.5 տոկոսով: Մեկ բնակչի հաշվով առևտրի շրջանառությունը կազմել է 489.5 հազ. դրամ՝ 2008թ. 441.3 հազ. դրամի դիմաց:

Բնակչությանը մատուցված ծառայություններ: 2009թ բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, փաստացի գներով, կազմել է 14481.6 մլն դրամ և 2008թ.

համեմատ աճել է 17.1 տոկոսով, ընդ որում կապի ծառայությունները՝ 31.9 տոկոսով, կոմունալը՝ 9.6 տոկոսով, մարդատար տրանսպորտը՝ 14.7 տոկոսով, հուրանոցները և ռեստորանները՝ 41.8 տոկոսով, կրթությունը՝ 5.9 տոկոսով, ֆինանսական գործունեությունը՝ 38.0 տոկոսով, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգումը՝ 4.8 տոկոսով, առողջապահությունը՝ 72.8 տոկոսով և այլ ծառայությունների ծավալը՝ 45.5 տոկոսով:

Սպառողական գներ: ԼՂՀ սպառողական շուկայում 2009թ. արձանագրվել է գների աճ: 2009թ. սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.4 տոկոս, ընդ որում ոչ պարենային ապրանքներինը՝ 1.1 տոկոս:

2009թ., նախորդ տարվա համեմատ, սպառողական գների ինդեքսը կազմել է 103.8 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.1 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.9 տոկոս, ծառայությունների սակագներինը՝ 109.5 տոկոս:

Ջրաղվածություն և գործազրկություն: Տնտեսության ճյուղերում զբաղվածների (վարձու աշխատողների) միջին ցուցակային թվաքանակը 2009թ. կազմել է 45652 մարդ, որը 2008թ. համեմատ աճել է 1559 մարդով կամ 3.5 տոկոսով, ընդ որում՝ կառավարում և պաշտպանությունում՝ 553 մարդով կամ 6.4 տոկոսով, բնակկոմտնտեսությունում և կենցաղսպասարկման ոլորտում՝ 385 մարդով կամ 22.2 տոկոսով, շինարարությունում՝ 313 մարդով կամ 8.4 տոկոսով, կրթությունում՝ 279 մարդով կամ 3.5 տոկոսով, արդյունաբերությունում՝ 136 մարդով կամ 2.7 տոկոսով, կապում՝ 125 մարդով կամ 11.3 տոկոսով, առողջապահությունում՝ 33 մարդով կամ 1.4 տոկոսով, ֆինանսներ և վարկավորման ոլորտում՝ 36 մարդով կամ 8.6 տոկոսով:

Վարձու աշխատողների թվաքանակի նվազում է նկատվել առևտրի, գյուղատնտեսության, սոցիալական ապահովության և ապահովագրության, տրանսպորտի և հասարակական կազմակերպությունների ճյուղերում:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժնում հաշվառման են կանգնել 3751 չբաղված քաղաքացիներ, որոնց 94.1 տոկոսը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Ընդ որում՝ Ստեփանակերտ քաղաքում աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը կազմել է 3004 մարդ, որից՝ 3001-ը կամ 99.9 տոկոսը գործազուրկ:

Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը 2009թ. հունվարի 1-ի նկատմամբ աճել է 1.7 տոկոսով, իսկ գործազուրկների թվաքանակը՝ 1.9 տոկոսով: 2009թ. ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության համապատասխան բաժին դիմած քաղաքացիներից աշխատանքի են տեղավորվել 165 մարդ՝ 2008թ. 180-ի փոխարեն:

2009թ. ԼՂՀ-ում գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, կազմել է 5.7 տոկոս և 2008 թ. նկատմամբ ավելացել է 0.1 տոկոսային կետով:

Աշխատանքի վարձատրություն: 2009թ. տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 88768 դրամ և 2008թ. համեմատությամբ ավելացել է 10.3 տոկոսով:

2008թ. համեմատ մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձի նկատելի աճ է գրանցվել տնտեսության բոլոր ճյուղերում բացի սոցիալական ապահովության և ապահովագրության, կապի, գիտության և գիտական սպասարկման ճյուղերից:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը միջին հանրապետական աշխատավարձի համեմատ զգալիորեն ցածր է եղել գիտության և գիտական սպասարկման, անտառտնտեսության, ֆիզկուլտուրա և սպորտի, մշակույթի և արվեստի, սոցիալական ապահովության և ապահովագրության ճյուղերում կազմելով համապատասխանաբար՝ 50.7, 51.2, 51.4, 55.8, 61.8 տոկոս:

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2009թ. կազմել են 88366.8 մլն դրամ և 2008թ. համեմատ աճել են

9.4 տոկոսով: Դրամական ծախսերը կազմել են 88249.3 մլն դրամ, նախորդ տարվա համեմատ ավելացել են 11.6 տոկոսով: Դրամական եկամուտները գերազանցում են ծախսերին 117.5 մլն դրամով կամ 0.1 տոկոսով:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները 2009թ. կազմել են 80867.7 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 5.5 տոկոսով:

Համախմբված բյուջեի ցուցանիշները*: 2009թ. ԼՂՀ համախմբված բյուջեի եկամուտները կազմել են 22185.1 մլն դրամ, որի 61.4 տոկոսը հանդիսանում են հարկային եկամուտները, իսկ 25.6 տոկոսը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

2008թ. համեմատ համախմբված բյուջեի եկամուտներն աճել են 1140.0 մլն դրամով կամ՝ 5.4 տոկոսով:

2009թ. ԼՂՀ համախմբված բյուջեի ծախսերը կազմել են 56244.2 մլն դրամ՝ 2008թ. համեմատ աճելով 8.8 տոկոսով:

Պետական բյուջեի ցուցանիշները: 2009թ. ԼՂՀ պետական բյուջեի մուտքերը կազմել են 55661.1 մլն դրամ՝ 2008թ. համեմատ աճելով 8.3 տոկոսով:

Ընդհանուր մուտքերից 21250.8 մլն դրամը ձևավորվել է ի հաշիվ բյուջեի եկամուտների (նախորդ տարվա 19911.7 մլն դրամի դիմաց) և 34410.2 մլն դրամը (31441.8 մլն դրամ)՝ ի հաշիվ միջպետական վարկի և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների:

2009թ. պետական բյուջեի եկամուտների 96.6 տոկոսը կամ 20540.8 մլն դրամը կազմում են ընթացիկ եկամուտները և 3.4 տոկոսը կամ 710.0 մլն դրամը՝ պաշտոնական դրամաշնորհները: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ եկամուտները աճել են 8.1 տոկոսով:

2009թ. պետական բյուջեի ընթացիկ եկամուտների 64.8 տոկոսը կամ 13305.6 մլն դրամը հանդիսացել են հարկային եկամուտները (նախորդ տարվա 65.6 տոկոսի կամ 12462.5 մլն դրամի դիմաց), որոնց 56.2 տոկոսը կազմել են անուղղակի հարկերը՝ ԱԱՀ՝ 7187.9 մլն դրամ և ակցիզային հարկը՝ 294.6 մլն դրամ (համապատասխանաբար՝ 57.9 տոկոսի, 6864.1 մլն դրամի և 351.2 մլն դրամի դիմաց):

Պետբյուջեի շահութահարկի գծով մուտքերը կազմել են 1048.6 մլն դրամ՝ նախորդ տարվա նույնատեսակի համեմատ աճելով 15.5 տոկոսով: Եկամտահարկի գծով մուտքերը 2009թ. կազմել են 1832.5 մլն դրամ կամ պետական բյուջեի հարկային եկամուտների 13.8 տոկոսը:

Ընթացիկ եկամուտների հաջորդ տարրի մասով՝ պետական տուրքի գծով մուտքերը կազմել են 379.7 մլն դրամ կամ ընթացիկ եկամուտների 1.8 տոկոսը և նախորդ տարվա համեմատ նվազել է 10.0 տոկոսով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարները 2009թ. կազմել են 5681.5 մլն դրամ կամ ընդամենը եկամուտների 26.7 տոկոսը:

Այլ եկամուտների գծով պետբյուջեի մուտքերը կազմել են 1174.0 մլն դրամ (նախորդ տարվա համեմատ նվազումը կազմել է 28.3 տոկոս) կամ ընթացիկ եկամուտների 5.7 տոկոսը:

2009թ. ԼՂՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 55098.5 մլն դրամ (ներառյալ համայնքների բյուջեներին տրված դոտացիաները)՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճելով 10.0 տոկոսով:

Համայնքների բյուջեների ցուցանիշները: 2009թ. համայնքների բյուջեների եկամուտները և տրանսֆերտները կազմել են 2242.2 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 1.5 տոկոսով:

Պետական բյուջեից ստացված դոտացիաները կազմել են ընդհանուր եկամուտների 58.3 տոկոսը կամ 1307.9 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 21.5 տոկոսով:

Համայնքների բյուջեների ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 2453.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.4 տոկոսով:

2009թ. համայնքների բյուջեների պակասուրդը կազմել է 211.4 մլն դրամ՝ նախորդ տարվա 498.2 մլն դրամի դիմաց:

* ԼՂՀ համախմբված բյուջեն իր մեջ ներառում է ԼՂՀ պետական և համայնքների բյուջեների ցուցանիշները: Նշված բյուջեների համախմբում ընթացքում՝ կրկնակի հաշվարկումից խուսափելու համար, հաշվի չեն առնվում դրանց միջև ներքին տրանսֆերտները:

Առևտրային բանկեր: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկերը կազմել են 29249.1 մլն դրամ և 2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել են 11436.3 մլն դրամով կամ 64.2 տոկոսով: Վարկային ներդրումները (դրամով և տարադրամով) կազմել են 28994.7 մլն դրամ և 2009թ. հունվարի 1-ի նկատմամբ աճել են 11660.5 մլն դրամով կամ 67.3 տոկոսով:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ արդյունաբերությունում իրականացված վարկավորումը կազմել է 5692.2 մլն դրամ (2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 70.8 տոկոսով), գյուղատնտեսությունում՝ 1798.6 մլն դրամ (2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 72.3 տոկոսով), շինարարությունում՝ 4435.2 մլն դրամ (2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 3 անգամ), առևտրում՝ 4480.0 մլն դրամ (2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 6.5 տոկոսով) և այլ ճյուղերում՝ 12843.2 մլն դրամ (2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 65.5 տոկոսով):

Ըստ տնտեսության հատվածների 2010թ. հունվարի 1-ի դրությամբ վարկերի 62.3 տոկոսը տրամադրվել է ռեզիդենտ կազմակերպություններին, 34.8 տոկոսը՝ տնային տնտեսություններին՝ 2009թ. հունվարի 1-ի դրությամբ համապատասխանաբար 56.3 տոկոսի, 42.7 տոկոսի փոխարեն:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ ներգրավված ավանդները կազմել են 29055.6 մլն դրամ և 2009թ. հունվարի 1-ի դրությամբ աճել են 23.2 տոկոսով:

Ավանդների ընդհանուր կառուցվածքում 77.8 տոկոսը պատկանում է ռեզիդենտներին, 22.2 տոկոսը՝ ոչ ռեզիդենտներին, ընդ որում ռեզիդենտների կողմից ներգրավված ավանդների 26.1 տոկոսը ցայահանջ են, 73.9 տոկոսը՝ ժամկետային:

Բանկերում ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների մնացորդը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 9113.9 մլն դրամ և 2009թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 2317 մլն դրամով կամ 34.1 տոկոսով:

Արտաքին առևտուր: Արտաքին առևտրաշրջանառության ծավալը, 2009թ. փաստացի գներով, կազմել է 107550,2 մլն դրամ կամ 293967,4 հազար ԱՄՆ դոլար, այդ թվում սպրանքների արտահանումը՝ 21222,5 մլն դրամ (57341,2 հազ. դոլար), իսկ ներմուծումը՝ 86327,7 մլն դրամ (236626,2 հազ. դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 65105,2 մլն դրամով (179285,0 հազ. դոլարով):

2008թ. համեմատությամբ 2009թ. արտաքին առևտրաշրջանառության ծավալը նվազել է 3,6 տոկոսով (համեմատությունը կատարված է ԱՄՆ դոլարով):

2009թ. ԱՂՀ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 100999,1 մլն դրամ (276208,4 հազ. դոլար) կամ ընդհանուր սպրանքաշրջանառության 94,0 տոկոսը, իսկ այլ երկրների հետ՝ 6551,1 մլն դրամ (17759,0 հազ. դոլար) կամ 6,0 տոկոսը:

Մարդասիրական օգնություն: 2009 թվականի ընթացքում, մարդասիրական օգնության կարգով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են ներմուծվել 317727.9 հազ. դրամի սպրանք: Ստացված մարդասիրական օգնության 45.3 տոկոսը մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ են, 16.0 տոկոսը՝ դեղորայք և բժշկական սպրանքներ, 8.2 տոկոսը՝ հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ, 8.0 տոկոսը՝ սպարատներ և սարքեր, 10.6 տոկոսը՝ տարբեր տեսակի սպրանքներ:

2009 թվականին, նախորդ տարվա համեմատ, մարդասիրական օգնության ծավալը աճել է 77.5 տոկոսով: Մարդասիրական օգնություն ստացվել է Արաբական Միացյալ Էմիրություններից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ռուսաստանի Գաշնությունից, Գերմանիայից, Հոլանդիայից, Հունաստանից և Հայաստանի Հանրապետությունից:

Ժողովրդագրական իրավիճակ: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ բնակչության թվաքանակը կազմել է 141.4 հազար մարդ:

2009թ. ԼՂՀ-ում ծնվել է 2821 երեխա, որը 2008թ. համեմատ ավելացել է 403-ով կամ 16.7 տոկոսով, մահացել է 1266 մարդ՝ նվազելով 51 մարդով կամ 3.9 տոկոսով: Մեռելածին և մինչև մեկ տարեկան մահացած երեխաների թիվը կազմել է համապատասխանաբար՝ 7 և 30՝ 2008թ.՝ 18-ի և 33-ի դիմաց:

Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ ԼՂՀ-ում 2009թ. կազմել է 26 տարեկան, ընդ որում առաջնեկ ունեցող մոր միջին տարիքը՝ 23 տարեկան:

2009թ. ծնված երեխաների 52.6 տոկոսը տղաներ են:

Հանրապետությունում բնակչության բնական աճը կազմել է 1555 մարդ, որը 2008թ. համեմատ ավելացել է 454 մարդով կամ 41.2 տոկոսով:

2009թ. պաշտոնապես հաշվառված եկողների թվաքանակը կազմել է 914, իսկ հանրապետությունից մեկնողների թվաքանակը՝ 403 մարդ: Մեխանիկական հավելածը կազմել է 511 մարդ:

2009թ. գրանցված ամուսնությունների թիվը կազմել է 947 կամ 1000 բնակչի հաշվով՝ 6.7 ամուսնություն՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝ 3057-ի և 21.9-ի դիմաց, իսկ ամուսնալուծությունների թիվը՝ 106 կամ 1000 բնակչի հաշվով 0.7՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝ 137-ի և 1.0-ի դիմաց:

Հանրապետությունում 2009թ. գրանցված ամուսնությունների թիվը 2110-ով կամ 69.0 տոկոսով նվազել է նախորդ տարում գրանցված ամուսնությունների թվից, ամուսնալուծությունների թիվը՝ 31-ով կամ 22.6 %-ով:

Որդեգրում: Ըստ ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2009թ. կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրման ենթակա երեխաների թվաքանակը կազմել է 7 երեխա՝ նախորդ տարվա 4-ի դիմաց:

Կենսաթոշակառուներ: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կենսաթոշակառուների թիվը կազմել է 33611 մարդ, որը 2009թ. հունվարի 1-ի համեմատ նվազել է 1182 մարդով կամ 3.4 տոկոսով:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցված հաշմանդամների թիվը կազմել է 10207 մարդ (ընդհանուր կենսաթոշակառուների 30.4 տոկոսը), որից 856-ը (8.4 տոկոսը) հանդիսանում են առաջին խմբի, 6373-ը (62.4 տոկոսը)՝ երկրորդ խմբի, 2471-ը (24.2տոկոսը)՝ երրորդ խմբի և 507-ը (5.0 տոկոս)՝ մինչև 18 տարեկան հաշմանդամները: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հաշմանդամների թիվն նվազել է 2.1 տոկոսով:

2009թ. կենսաթոշակի միջին չափը կազմել է 27839 դրամ, որը 2008թ. համեմատ ավելացել է 3324 դրամով կամ 13.6 տոկոսով:

Ստորջապահություն: 2009թ. հանրապետությունում հիվանդանոցային հիմնարկների թիվը կազմել է 21, մահճակալների թիվը՝ 662: 10000 բնակչի հաշվով հիվանդանոցային մահճակալների թիվը կազմել է 46.8:

2009թ. հանրապետությունում բժիշկների թվաքանակը կազմել է 344, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 1272 մարդ: 10000 բնակչի հաշվով բժիշկների և միջին բուժանձնակազմի թվաքանակը կազմել է համապատասխանաբար՝ 24.3 և 90.0 մարդ:

Հանցագործություններ: Հանրապետությունում 2009թ. գրանցվել է 575 հանցագործության դեպք՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.3 տոկոսով:

Արձանագրված հանցագործությունների տեսակներում մեծ տեսակարար կշիռ ունեն սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝ 36.5 տոկոս, հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները՝ 23.7տոկոս, որոնք նախորդ տարվա համեմատ կազմել են համապատասխանաբար՝ 63.6 և 115.3 տոկոս:

Հանրակրթություն: 2009/2010 ուսումնական տարում հանրապետությունում գործում են 232 ցերեկային հանրակրթական դպրոցներ, վարժարաններ և հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ հիմնարկներ:

Դպրոցների ընդհանուր թվի 87.1 տոկոսը կամ 202-ը՝ գտնվում են գյուղական բնակավայրերում և 12.9 տոկոսը կամ 30-ը՝ քաղաքային բնակավայրերում:

2009/2010 ուսումնական տարում հանրապետության դպրոցներում սովորել են 20595 աշակերտ, որոնց թիվը 2008/2009 ուսումնական տարվա համեմատ նվազել է 218-ով կամ մոտ 1.0 տոկոսով: Աշակերտների 50.6 տոկոսը սովորել են քաղաքային և 49.4 տոկոսը՝ գյուղական դպրոցներում:

2009/2010 ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում դասավանդել է 4592 ուսուցիչ, որոնց թիվը 2008/2009 ուսումնական տարվա համեմատ ավելացել է 67-ով կամ 1.5 տոկոսով: Ուսուցիչների 82.7 տոկոսը կամ 3797-ը՝ կանայք են:

Միջին մասնագիտական կրթություն: 2009/2010 ուստարում հանրապետությունում գործում են 4 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում է 1377 ուսանող՝ նախորդ ուստարվա 1365-ի դիմաց: Ուսուցումն իրականացվում է ինչպես ութամյա, այնպես էլ տասնամյա կրթության հիմքի վրա:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ուսուցումն իրականացնում են պետպատվերով և վճարովի հիմունքներով:

2009/2010 ուստարում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թվաքանակից 557-ը կամ 40.5 տոկոսը սովորում է անվճար և 820 -ը կամ 59.5 տոկոսը՝ վճարովի ուսուցմամբ:

Քարձրագույն կրթություն: 2009/2010 ուսումնական տարում հանրապետությունում գործում են 7 քարձրագույն ուսումնական հաստատություններ՝ 2 պետական և 5 ոչ պետական, որտեղ սովորում է 6542 ուսանող, այդ թվում՝ 4528-ը կամ 69.2 տոկոսը՝ պետական, իսկ 2014-ը կամ 30.8 տոկոսը՝ ոչ պետական ԲՈՒՀ-երում:

Մագիստրատուրա: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ԱրՊՀ-ի, ՀՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի և «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մագիստրատուրաներում սովորում է 472 մարդ, որից 348-ը՝ կանայք:

Սովորողների 46.8 տոկոսը կամ 221 մարդ ուսանում է անվճար և 53.2 տոկոսը կամ 251-ը՝ վճարովի ուսուցմամբ:

Ասպիրանտուրա: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ԱրՊՀ-ի ասպիրանտուրայում սովորում են 42 մարդ, որից 36-ը՝ կանայք: Առանց արտադրությունից կտրվելու ուսուցմամբ ԱրՊՀ-ի ասպիրանտուրա է ընդունվել 27 մարդ, որից՝ 23-ը կանայք:

Թանգարաններ: 2008թ. հանրապետությունում գործել է 10 թանգարան, որից 3-ը՝ գտնվում է Ստեփանակերտ քաղաքում: Ըստ բնույթի թանգարաններից 9-ը՝ պատմաերկրագիտական են, 1-ը՝ հուշային:

Թանգարանների հիմնական ֆոնդերում հաշվառված է 56437 ցուցանմուշ (67.6 տոկոսը՝ ք. Ստեփանակերտում), դրանից 2009թ. ցուցադրվել է 22878-ը կամ ընդամենի 40.5 տոկոսը:

Գրադարաններ: 2009թ. հանրապետությունում գործել է 1 հանրապետական և 8 հանրային գրադարան, այդ թվում՝ 1-ը մանկական:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ գրքային ֆոնդը կազմել է 386497 օրինակ, որից 45.1 տոկոսը հանրապետական գրադարանի ֆոնդն է:

2009թ. ընթերցողների թվաքանակը կազմել է 20836 մարդ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 669 մարդով կամ 3.1 տոկոսով: Կանայք կազմել են ընթերցողների 66.8 տոկոսը: Ընթերցողների ընդհանուր թվաքանակից 11488-ը հանդիսանում են մինչև 15 տարեկան երեխաները, 4062-ը՝ 16-25 տարեկան անձինք: Հաճախումների քանակը կազմել է 198162՝ նախորդ տարվա 162681-ի դիմաց: Ընթերցողների միջին թիվը 1000 բնակչի հաշվով կազմել է 147 մարդ: 2009թ. հանրապետության գրադարաններում աշխատել է 68 մարդ, որից 28-ը՝ ունեն բարձրագույն, 26-ը՝ միջին մասնագիտական կրթություն:

Համույթների գործունեությունը: 2009թ. հանրապետությունում գործել է 14 համերգային կազմակերպություն, որից 6-ը՝ Ստեփանակերտ քաղաքում: Կոլեկտիվների ուժերով կազմակերպվել է 187 համերգ, իսկ այլ կոլեկտիվների հետ համատեղ՝ 54 համերգ: Հանրապետությունում կազմակերպված համերգներին ներկա է եղել 35.6 հազ. հանդիսատես: Համերգներից ստացված հասույթը կազմել է 3013.2 հազ. դրամ:

Մարզական կազմակերպությունների գործունեությունը: 2009թ. ԼՂՀ-ում գործել է 12 մարզական դպրոց, որից 5-ը՝ Ստեփանակերտ քաղաքում: Մարզադպրոցներում գործում է օլիմպիական և ոչ օլիմպիական մարզաձևերի 232 խումբ, այդ թվում՝ գյուղական վայրերում՝ 51 խումբ: Մարզադպրոցներում ընդգրկված է 3075 մարզիկ (721-ը՝ աղջիկներ), այդ թվում՝ գյուղական վայրերում՝ 722 մարզիկ (203-ը՝ աղջիկներ): Մարզիչների թիվը կազմել է 167 մարդ (30-ը՝ կանայք):

ԼՂՀ բնակարանային ֆոնդը: 2009թ. տարեվերջին ԼՂՀ-ում առանձնատների և բնակարանների քանակը, ըստ ներկայացված հաշվետվությունների, կազմել 40372 միավոր, որից 29798-ը կամ 73.8 տոկոսը՝ առանձնատներ են: Առանձնատների և բնակարանների

ընդհանուր մակերեսը կազմել է 3710.4 հազ. քառ. մետր, որից բնակելի մակերեսը՝ 2354.1 հազ. քառ. մետր կամ ընդհանուր մակերեսի 63.4 տոկոսը:

Բնակարանների և բնակելի տների (առանձնատների) առուվաճառքը: 2009թ. գրանցվել է բնակարանի և առանձնատան օտարման 385 գործարք, որից 204-ը կամ 53.0 տոկոսը բազմաբնակարան շենքերի բնակարաններ են, մնացած 181-ը կամ 47.0 տոկոսը՝ առանձնատներ:

Բնակարանների և առանձնատների օտարման գործարքների 62.3 տոկոսը բաժին է ընկնում Ստեփանակերտ քաղաքին, ընդ որում՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման գործարքների՝ 77.0 տոկոսը և առանձնատների օտարման գործարքների՝ 45.9 տոկոսը:

Հյուրանոցային տնտեսության գործունեությունը: 2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործել է 21 հյուրանոց՝ 649 տեղ միաժամանակյա տարողությամբ: Ընդ որում՝ Ստեփանակերտ քաղաքում գործել է 17 հյուրանոց՝ 578 տեղ միաժամանակյա տարողությամբ:

2009թ. ընթացքում հանրապետության հյուրանոցներում տեղերը զբաղեցվել են հիմնականում արտասահմանյան քաղաքացիների կողմից:

Հյուրանոցներում համարների թիվը կազմել է 300, որոնց բնակելի տարածությունը 6314.9 քառ. մ է, այսինքն՝ մեկ համարի բնակելի մակերեսը միջին հաշվով կազմել է 21.0 քառ. մ նախորդ տարվա 19.3 քառ.մ-ի փոխարեն:

Բնակավայրերի գազաֆիկացումը: 2009թ. վերջին գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունը կազմել է 982.8 կմ՝ տարեսկզբի 837.4 կմ –ի դիմաց: Նոր շինարարության և գործողների ընդարձակման հաշվին 2009թ. շահագործման է հանձնվել 145.4 կմ երկարությամբ գազախողովակների փողոցային ցանց, ընդ որում քաղաքներում 65.4 կմ և գյուղերում՝ 80.0 կմ:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գազաֆիկացված բնակարանների քանակը կազմել է 23348, որից 2009թ. ընթացքում գազաֆիկացվել է 1797 բնակարան (այդ թվում՝ 981-ը գյուղական վայրերում):

2009թ. ընթացքում սպառողներին փաստացի բաց է թողնվել 35104.6 հազ. խոր. մետր գազ, այդ թվում բնակչությանը՝ 15140.2 հազ. խոր. մետր (նախորդ տարվա 14197.3 հազ. խոր. մետրի դիմաց): Նույն ժամանակահատվածում փաստացի բաց թողնված բնական գազից 1547.8 հազ. խոր. մետրը հանդիսացել են կորուստները (2008թ. 1426.3 հազ. խոր. մետր):

2009թ. ընթացքում գազաֆիկացված բնակարաններում մեկ բաժանորդի հաշվով միջինում սպառվել է 648.5 խոր. մետր գազ՝ 2008թ. 658.8 խոր. մետրի դիմաց: